



ԾԱՂԿԱՐԱՐ ՍԱՀԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ

Ծաղկարար Սահակ (Իսահակ) եպիսկոպոս Տեր-Գրիգորյանի հիշատակարանի վրա, որ հեղինակն անվանել է «Բազմավէպ», առաջին անգամ ուշադրություն է դարձրել Հ. Ղ. Ալիշանը, տպագրելով այդ հիշատակարանից մի փոքրիկ հատված «Այրարատ»-ում: Այնուհետև երկու այլ հեղինակներ՝ Տ. Ղազանչյան¹ և Վահան վարդապետ Տերյան², նույն հիշատակարանից մեջբերումներ են արել իրենց աշխատություններում:

Այժմ հիշատակարանը ամբողջությամբ ներկայացվում է տպագրության առաջին անգամ: Հիշատակարանը գտնվում է Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան պետական մատենադարանում և կրում է 6247 համարը: Բաղկացած է 23 էջից, գրված կապտավուն հաստ թղթի վրա, սև թանաքով, առանց զարդագրությունների: Լուսանցքներում հեղինակի կողմից արված են նշումներ ու լրացումներ: Գրված է էջմիածնի վանքում 1800-ական թվականների սկզբից մինչև 1843 թվականը: Հիշատակարանը միջում ընդհատվում է 1815 թվականով և վերսկսվում 1833 թվականին: Այս տարիների գրառումների պակասը կարելի է բացատրել նաև նրանով, որ հեղինակը բացակայել է էջմիածնից 1822—1827 թվականներին՝ գտնվելով Հաղբատում:

Վերջին էջի վրա կա էմին Տեր-Գրիգորյանի հիշատակարանը այդ ձեռագրի մասին:

Սահակ եպիսկոպոս Տեր-Գրիգորյանը շարունակել է իր ուսուցչի՝ Հովհան Ոսկերչյանի

ավանդությունը՝ գրի առնել ժամանակի պատմական դեպքերը: Հովհան Ոսկերչյանի ժամանակագրությունը, որն ընդգրկում է Արարատյան աշխարհում կատարված անց ու դարձը մինչև 1804 թվականը, առաջին անգամ թարգմանված և տպագրված է ֆրանսերեն Փարիզում: Ոսկերչյանի աշակերտներից է նաև Հարություն Արարատյանը, որի հիշողությունները նույնպես թարգմանված են մի շարք լեզուներով³: Սահակ Ծաղկարարը իր անձնական կյանքի դեպքերի շարադրումը հյուսում է պատմական անց ու դարձի հետ, գրելով պարզ լեզվով և համեմելով գեղարվեստական նկարագրություններով ու առածներով: Սրանով նա հարստացնում է հայ մեմուարային գրականությունը մի նոր օրինակով:

Բազմազան է եղել նրա հետաքրքրությունների ոլորտը: Սերը դեպի գործնական գիտելիքները չի խանգարել, որ նա զբաղվի նաև տեսական հարցերով: Նա բնագետ է եղել: Հիշատակարանում իր դիտողություններն է անում որդան կարմրի զարգացմանը խանգարող երևույթների՝ շոգի, ցրտի, խոնավության, երաշտի վերաբերյալ: Իր պարտեզում նա մի ապակեպատ մարգ է ունեցել և մեջը պահել կենդանի որդան կարմիրը, ուսումնասիրություններ կատարելու համար:

Հիշատակարանի տպագրությամբ հրավիրում ենք մասնագետների ուշադրությունը, ավելի խորազնին ուսումնասիրություններ կատարելու և օգտվելու Սահակ Ծաղկարարի թողած արժեքավոր ժառանգությունից:

Ս. ԱՎԴԱԼԻԲԵԳՅԱՆ

¹ Т. Т. Казанджян, «Очерки по истории химии в Армении», Эреван. 1955 г.

² Վահան վարդապետ Տերյան, «Ծաղկարար Սահակ եպիսկոպոս Տեր-Գրիգորյան», «Էջմիածին», 1959, № 6, էջ 23:

³ «Жизнь Артемия Араратского уроженца селе-
ния Вагаршапата», СПб, 1813 г.